

ուած անուն մ'էր, և ունի գրական անտիպ գործեր, զորս պիտի հրատարակէ նահ. Դր. Բար. Ընկերակցութիւնը յայտերժացնելու համար հանգուցեալին յիշատակը:

**ՓՐՈՖ.** ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆՃԵՍՆ Վախճանած է Զատկի օրը: « Tribune de Genève » իր 20 Ապրիլ թուրին մէջ կը գրէ: « Զատկի օրը հիւանդանոցին մէջ մեռաւ նշանակելի անձ մը որ իր լաւ օրերն էր ունեցած: Ունճեան, հայազգի, մեծ միտք մըն էր և անսայթաբ կը խօսէր վեցեակ մը արեւելեան լեզուներ:

**ՓՐՈՓ.** Յ. Ունճեան երկար տարիներ աշխատած է Օսմանեան Արտաքին գործոց նախարարութեան մէջ՝ Տատեանի օրով. Երիտ. Թուրքերու յեղափոխութեան վերջն է որ կ'անցնի արտասահման և հոն կ'անցընէ զրկանքի կեանք մը, տալով միշտ ինքվինքը իր նախասիրած ուսումնական նիւթերուն:

Երկար տարիներէ ի վեր Ժընեվի մէջ կ'ապրէր չբաւորութեան մէջ, հոս ու հոն բանախոսութիւններ ընելով՝ զորս կը հանէր իր հարուստ պաշարէն: Աքանչելի մարդ մ'էր, ոսկի սիրտ մը: Քիչ ժամանակ առաջի որդին կորսնցուց Մեքսիկոյի մէջ, միակ յոյսը իր զառամած օրերուն: Այդ մահը ալ աւելի դառնացուցած էր իր ծե-

րութիւնը, այնպէս որ մահը իրեն համար ազատութիւն մ'եղաւ: Նա սիրուած էր այն անձերէն՝ որոնք իրեն հետ մտերմօրէն ապրած էին»:

Այսչափ՝ տեղական լրագիրը, որուն հետ չեմ մոռնար յիշել Օր. Alice Ostermannի մէկ նամակը, ուր ան յետ գումարու յիշեալին մահը, թափանձագին կ'ըսէր. «Մեծապէս երախտապարտ պիտի մամ Զեղի եթէ Զեր թերթին մէջ բանի մը տողով իր մահազզը դնէր. Պըն. Ունճեան միշտ լի էր զմայլանքով, և հաւատարիմ բարի յիշատակներուն Զեր Ա. Դաշզարու վանքին, որ աստղն էր իր վշտալից կեանքին»:

Օտարներու այսցան ազնիւ զգացումներուն ըով պակաս չեն մնար մերիններն ալ, և մենք գիտակ ենք իսկապէս այն անձուկ սիրոյն որով կապուած էր նամեր Միսիթարեան Տան, և արդէն ժամանակ մը, 90 ական թուականներուն, եղած է ուժուցիչ իրաւաբանական գիտութեանց մեր Քաղկեդոնի վարժարանին մէջ. և այդ ճիւղի մասին երկասիրութիւն մ'ալ հրատարակած է մեր տպարանէն 1903ին, «Իրաւագիտական թերթ. Ակդրուեր. աշխ. չորս մասերու բաժնուած»:

Հանգիստ իր տառապեալ ոսկորներուն և լոյս իր հոգւոյն և յաւիտենական երշանկութիւն:

## ՀԱՆԳԻՄ ՀՈԳԻՈՅ ԳԵՐՊ. ՅՈՎՀ. ԳՈՒԶԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Վերջին պահուն բօթը կը գուժէ նաեւ մահը Արիի. Յովիաննէս Եպս. Գուգեանի, Առաջնորդ Կաթողիկէ Հայոց Եպիպոտոսի: Տակաւին եւ ոչ իսկ վաթսընամեայ, բայց սպառած իր ամբողջ կեանքը ժողովրդեան բարոյական եւ կրօնական օգտին նուիրած ըլլալուն՝ առողջական հիւանդագին վիճակով, այսպէս շուտով կը լքէ իր հօտը: Գերապայծառը ծնած է 1875 Փետրուար 13ին ի վեր պետն էր Եպիպոտոսի Հայ կաթողիկէ Առաջնորդարանին:

Հանգիստ եւ յաւիտենական երանացումն իր հոգւոյն:

ԽՄԲ.

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍԱԱՑԱԾ ԵՆՔ

Պ. Արեգիան. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԿՉՈՒԹԻՒՆԸ ԱԽԱՌՈՇՐԱՅԻՆ, - ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ (1 Յունուար 1914-1930). Պետհրատ. 1930-1, 8<sup>o</sup>, էջ 156, գինը՝ 1 Ո. 50 Կ. Կամ 75 սենթ.

Վ. Թերզիկաշիան. — Գիր ու ԱՐՈՒԵՍՏ (գէմքեր, երկեր, հարցեր) Լենինական, 1926, 8<sup>o</sup>, էջ 112, գինը՝ 50 Կ.

Քրաչեան Միհանան. — ԺԱՄ ՀԵՊԻՆՍԿԻՆԵՐ (Ծերուն Թորգոմեան) Թիֆլիս, 1927, 8<sup>o</sup>, էջ 86, գինը՝ 50 Կ.

Ցակորեան Ցակոր. — ԼԵՆԻՆԳՐԱԴԻՆ ՊՈԵՄ. Վրաստանի պետհրատ, Սախելգամի. Թիֆլիս, 1931, 16<sup>o</sup>, էջ 32, գինը՝ 50 Կ.

Սիմոնեան Վարդան. — Վերելքին. Վրաստ. Պետհրատ. Թիֆլիս, 1929, 16<sup>o</sup>, էջ 32, գինը՝ 15 Կ.

Պողոսեան Հռիփսիմէկ. — ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆՆԵՐ, Վ. Պետհրատ, Թիֆլիս, 1930, 16<sup>o</sup>, էջ 32, գինը՝ 15 Կ.

Սուրիսեարեան. — ՅԵՏ - ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Ա. Պրոլետարական գրականութիւն. Հ. Ս. Խ. Հ. Պետհրատ. Թիֆլիս 1929, 8<sup>o</sup>, էջ 352, գինը՝ 3 Ո.

Ս. Յարուբիշևեան, Խ. Ալվագիան, Գ. Աղյորեան (Կազմակերպութիւն). — ԴԱՍԱԳԻՐՔ Լեզուի և գրականութեան. Զ. տարի. Պետական Ուսմանկ հրատ բաժին. Երեւան, 1932, 8<sup>o</sup>, էջ 252, գինը՝ 2 Գ. 50 Կ. (16 մ').

Սողոմնեան Ե. (կազեց). — ԴԱՍԱԳԻՐՔ Լեզուի ԵԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ. Է ապրի. (Վերակազմ. Բ. հրատ.) Պետհր. - Ուսմանկ հրատապաժին, Երեւան, 1932, 8<sup>o</sup>, էջ 282, գինը՝ 2 Ո. 75 Կ.

Մարտիրոսեան Գորկի. — ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ Ա. (էջ 130, 8<sup>o</sup>, գինը՝ 75 Կ.). — Բ. (էջ 109, 8<sup>o</sup>, գինը՝ 70 Կ.): Խորագորութեամբ Ս. Զօրեանի. Պետհրատ. Երեւան, 1928: — ՀԱՅԻՆԱԹՆԵՐ (արտասպա. «Պայքար» ՀՐԺԹԵՐԸ 1915-16). Խմբ. Սիմակի. Հ. Ս. Խ. Հ. Պետհրատ. Երեւան, 1928, 8<sup>o</sup>, էջ 48, գինը՝ 25 Կ: — ԵՐԻՑԱՍԱԼՈՐԴ ԳՐՈՂԸ. Խ. Ս. Հ. Վ. Ժ. Մ. Ժող. Կենդր. հրատ. (Ազատ Թրգմ. Վ. Ա.) Մոսկուա, 1926, 16<sup>o</sup>, էջ 35, գինը՝ 15 Կ.

Գ. Վ. Պետհանենվ. — Երկերի ԺՈՂՈՎԱԾՈՒ. Գ. հատ. Թրգմ. Գ. Սիմոնեանի և Գ. Մէհրաբեանի. Հ. Ս. Խ. Հ. Պետհրատ. Մոսկուա, 1926, 8<sup>o</sup>, էջ 468, գինը՝ 3 Ո. 50 Կ.

Վ. Լանտէ. — ՊՈԵՄ ԲԱՄԲԱԿԻ ՄԱՍԻՆ. (Երգ հերոսային) Ազերնեշր. Բագու, 1932, 16<sup>o</sup>, էջ 48, գինը՝ 404.

Կարաղոյ. — ԱՇՈՒՂՆԵՐ (Խորսէն - Հայերէն). Հայ պետհրատ. Մոսկուա 1929, 16<sup>o</sup>, էջ 40, գինը՝ 25 Կ.

ԼՈՒՍԱԲԱՅ. գրական գեղար. ժող. Վրաստ. Պետհր. Թիֆլիս, 1931, 8<sup>o</sup>, էջ 190, գինը՝ 3 Ո.

ՀՈԿՏԵՄԲԵՐ. Գ. գիրք. Վրաստանի Պրոլետարութիւնի ասոսցիացիա (Հայկական սեկցիա). Սախելգամի, Թիֆլիս 1930, 8<sup>o</sup>, էջ 116, գինը՝ 1 Ո. 40 Կ.

Տուրզեան Ի. Ս. — ԸՆՏԻՐԵՐ Երկեր. Պատմուածքներ Ա. հատ. Թրգ. Ս. Զօրեան. Պետհրատ. Երեւան, 1931, 8<sup>o</sup>, էջ 271, գինը՝ 2 Ո.

Լաղակեան Երուանդ. — ԴԱՍԲԱԿԱՆՆԵՐԻ պեղումներ Խորհրդային Հայաստանում, (Հ. Ս. Խ. Հ. Լուսուկումատ. հրատ. Մելքոնեան Փոնդի). Երեւան, 1931, էջ 240, գինը՝ 3 Ո.

Մանամդիկան Յակոր. — ԿԵՒԽՈՆԵՐ և Հափեր հնագոյն հայ աղբիւներում. (Հ. Ս. Խ. Հ. Լուս. Ժողկումատ. հրատ. Մելք. Փոնդի). Երեւան, 1930, էջ 141, գինը՝ 1 Ո. 50 Կ.

ՈՒՂԵՑՈՅՅ. — Հայաստանի Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետութեան. Պետհրատ. Երեւան, 1932, էջ 146, գինը՝ 75 Կ.

## ԹԵՐԹԵՐ

«Գրական դիրքերում» (1931) Ե. տարի. Երեւան:

«Դարբնոց» (1922-1923) Թիֆլիս:

«Խորհրդային արուեստ» (1933). Բ. տարի. Երեւան:

«Եռ Ուղի» (1930). Երեւան: